ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1632-22 առ " 19 " 07 2022թ.

«ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Ն. Մեհրաբյանին
E-mail:san.company@bk.ru

[Ծանուցում ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-34/22-2-01/044
պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ]

Հարգելի՛պարոն Մեհրաբյան,

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար, էլեկտրամեկուսիչ նյութեր ձեռքբերման նպատակով, 2022թ. փետրվարի 18-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-34/22-2» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի միջև 2022թ. մարտի 24-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-34/22-2-01/044 պայմանագիրը (այսուհետև պայմանագիր)՝ 683256 (վեց հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ ընդհանուր գնով: Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց) էլեկտրամեկուսիչ նյութերի մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելուց հետո 30 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված ապրանքներից 2-րդ չափաբաժնի 505 հատ ժապավենից մատակարարվել է 421 հատը, մնացած քանակը «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Տեղեկացնում ենք, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՍԱՆ ԿՈՄՊԱՆԻ» ՍՊԸ -ի հետ 2022թ. փետրվարի 18-ին կնքած թիվ 01/044 պայմանագիրը:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով կկիրառվեն պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները:

Գլխավոր տնօրենի տեղակալ,
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Հ.Մաթևոսյան**

Կազմեց՝
ԳԲ առաջատար մասնագետ՝
Վ. Պետրոսյանը
Հեռ. 010-28-29-60, 37-42